Դավթաշենի համակարգող խարհրդի անհատական կազմի

ձևավորման վերաբերյալ հայտարարություն

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. փետրվարի 11-ի թիվ 25-Ն և 2016թ.-ի հունիսի 14-ի թիվ 64-Ն հրամանները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Դավթաշենի տարածքային բաժինը (այսուհետ՝ ՍԱՏԲ) սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով տարածաշրջանում Համաձայնագրի կողմեր հանդիսացող սուբյեկտներին՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Կողմեր) հրավիրում են հայտագրվելու և ձևավորելու համակարգող խորհուրդ /այսուհետ՝ Խորհուրդ/:

Խորհրդի կազմում պարտադիր ընդգրկվում են տարածաշրջանում գործող, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշման 1-ին կետով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք:

Խորհուրդը գործելու է խորհրդի անհատական կազմը ձևավորվելուց հետո 2 տարի ժամկետով:

Կողմերը խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ իրենց առաջարկությունները /հայտերը/ կարող են ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Դավթաշենի տարածքային բաժին մինչև 2020թ. փետրվարի 15-ը / հասցեն Դավթաշեն 3-րդ թաղամաս վարչական շենք, հեռ.011-518-269 /:

Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են.

ա) սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձը,

բ) սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացումը:

Գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներառված է Տարածքային մակարդակով սոցիալական համագործակցության Համաձայնագրում:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի

Դավթաշենի սոցիալական աջակցության

տարածքային բաժին